

ՄԵՆՈՒԹԻՒՆ

Անտունի հայուն

Դուրսը՝ գիշեր, աշո՛ւն գիշեր
Հով ու անձրեւ, տրտում գիշեր:

Ահա՛ ըստուեր մը ընտանի
Սենեակէս ներս լուռ կը սահի:

Սենեակ տրտում, համը բարեկամ
Կարենայի՛ իրեն պատմել
Թէ ըսպիտակ ու ոսկեթել
Ի՛նչ երազներ եմ հոս հիւսեր
Ու ե՛ս ֆակեր ի՛նչ տեսիլներ
Նենգ նայուածքին տակ այս կեանքին,
Թէ վշտի ի՛նչ բոսոր փուշեր
Անգութ ու բութ, սիրտս են խոցեր,
Թէ ինչպէս մահն է ինձ եկեր
Իր քրքիչով՝ վէրք փորագրեր,
Ու ժպիտով՝ դարման տուեր:

Ներսը՝ գիշեր, տրտում գիշեր
Անձայն ու թաց, աշո՛ւն գիշեր:

ՆՈՒԱՐԴ ԵԱՂԼԵԱՆ